ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 00 67, էլ. փոստ՝ meo@ypc.am

Դիտորդ մարմնի կազմը

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Լեւոն ԲԱՐՍԵՂՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

«ՓԻՆՔ»-ն ընդդեմ Aysor.am-ի գործով՝

2023 թվականի նոյեմբերի 15-ին Aysor.am լրատվական կայքում հրապարակված «Կամրջից իրեն նետել է նույնասեռական մի տղա», նոյեմբերի 21-ին հրապարակված «Աշխատանքից հեռացրել էին, ծնողները տնից հանել էին. մանրամասներ՝ կամրջից նետված նույնասեռական տղայի մասին» վերնագրով նյութերի եւ դրանց ֆեյսբուքյան հրապարակումների մեկնաբանությունների կապակցությամբ «ՓԻՆՔ» իրավապաշտպան կազմակերպության բողոքի վերաբերյալ:

Ա. ՓԱՍՏԵՐ

1. 2023-ի նոյեմբերի 15-ին Aysor.am կայքում հրապարակվել է լրատվական նյութ՝ «Կամրջից իրեն նետել է նույնասեռական մի տղա» վերնագրով: Նյութն ամբողջությամբ կրկնում է «Իրավունքի կողմ» հասարակական կազմակերպության հիմնադիր-նախագահ Լիլիթ Մարտիրոսյանի ֆեսբուքյան գրառումը՝ առանց որեւէ հավելումի: Լուրը հրապարակվել է նաեւ Aysor.am-ի ֆեյսբուքյան էջում: Նոյեմբերի 21-ին նույն լրատվականը հրապարակել է «Աշխատանքից հեռացրել էին, ծնողները տնից հանել էին. մանրամասներ՝ կամրջից նետված նույնասեռական տղայի մասին» վերնագրով մեկ այլ հոդված, որտեղ անդրադարձել է «17-ամյա երիտասարդի սեռական կողմնորոշումը՝ ինքնասպանության պատճա՞ռ» թեմայով Մեդիա կենտրոնում տեղի ունեցած քննարկմանը:

2. 2023թ. նոյեմբերի 23-ին Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմին է դիմել «ՓԻՆՔ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը՝ տեղեկացնելով, որ հիշյալ՝ 15.11.2023թ. նյութի ֆեյսբուքյան հրապարակման տակ շուրջ 900 մեկնաբանություն կա, որոնց գերակշռող մեծամասնությունը ատելության խոսք եւ վիրավորական արտահայտություններ է տարածում նույնասեռական անձանց նկատմամբ:

   Բողոքում նշվում է, որ լրատվամիջոցը թե՛ նոյեմբերի 15-ի, թե՛ նոյեմբերի 21-ի հրապարակումներում նյութերը ներկայացրել է պատշաճ կերպով, սակայն դրանց ֆեյսբուքյան հրապարակումների մեկնաբանությունները վերածվել են

ատելության խոսքի եւ բռնության կոչերի տարածման հարթակների։ Լրատվականը չի վերահսկել մեկնաբանությունների դաշտը, ինչն էլ ուղղակիորեն նպաստել է ԼԳԲՏ+ անձանց հանդեպ ատելության եւ բացասական վերաբերմունքի ամրապնդմանը։ Դիմումատուն շեշտում է, որ լրատվականը օգտատերերին ո՛չ հորդորել է զերծ մնալ նման վարքից, ո՛չ էլ ջնջել կամ արգելափակել է դրանք։

3. ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը, մինչ բողոքի առարկայական քննությունը, նոյեմբերի 24-ին դիմել է Aysor.am-ի խմբագրությանը՝ պարզաբանում ներկայացնելու առաջարկով, սակայն խմբագրությունը ԴՄ նամակին չի պատասխանել։

Բ. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. ՀՀ Սահմանադրություն, հոդված 29. Խտրականության արգելքը

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է։

II. Հայաստանի լրատվամիջոցերի եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր

…խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

3.5. 6. Մոդերացնել լրատվամիջոցի սոցցանցային էջերի մեկնաբանությունների հրապարակումը՝ հնարավորինս հեռացնելով ատելության խոսք, բռնություն եւ օրենքով արգելված այլ գործողություններ քարոզող, ակնհայտ վիրավորանք պարունակող գրառումները։

5.1. խուսափել մարդկանց հանդեպ նախապաշարված վերաբերմունքից՝ նրանց ցեղային, սեռային, տարիքային, կրոնական, ազգային, աշխարհագրական պատկանելության, սեռական կողմնորոշման, ֆիզիկական արատների, արտաքինի կամ սոցիալական կարգավիճակի պատճառով։

5.2. Որեւէ ձեւով չքարոզել ազգային, կրոնական թշնամանք եւ անհանդուրժողականություն, քաղաքական, սոցիալական, սեռական եւ լեզվական հայտանիշներով խտրականություն, բացառել ատելության խոսքը։

III. Զանգվածային լրատվության միջոցներում խտրականության դրսեւորումները բացառելու եւ հանդուրժողականություն ապահովելու վերաբերյալ ուղեցույց.

2. Կրոնական, ազգային փոքրամասնությունների, սոցիալական տարբեր խմբերի, քաղաքական այլ հայացքներ ունեցողների խնդիրներին վերաբերող թեմաներ արծարծելիս շատ կարեւոր են այդ խմբերի

ներկայացուցիչների եւ նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունների հետ հարցազրույցներն ու բոլորի դիրքորոշումները եւս հրապարակումներում ներկայացնելը: Խորհուրդ է տրվում մանրամասն քննարկել խնդիրներն այդ խմբերի կամ հասարակական կազմակերպությունների հետ:

IV. «Դելֆին ընդդեմ Էստոնիայի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշման հիման վրա ԴՄ մշակած ուղեցույց.

1. նկատի ունենալ, որ խմբագրություններն այլ հեղինակների մեկնաբանությունների համար պատասխանատվությունից ազատվում են միայն այն դեպքում, եթե կարող են հիմնավորել, որ տեղյակ չեն եղել եւ օբյեկտիվորեն չէին կարող տեղյակ լինել նման գրառումների առկայության մասին,
2. թեպետ ՄԻԵԴ-ի որոշումը մեկնաբանությունների մոդերացիա չի պարտադրում, այսուհանդերձ, խորհուրդ ենք տալիս հնարավորության դեպքում մոդերացնել դրանց հրապարակումը՝ հետեւելով, որ մեկնաբանությունների սյունակներում չհայտնվեն ակնհայտ ատելության խոսք, բռնություն եւ օրենքով արգելված այլ գործողություններ քարոզող, ակնհայտ վիրավորանք պարունակող գրառումներ,
3. եթե, այնուամենայնիվ, հայտնվում են նման գրառումներ, ապա հայտնաբերելու դեպքում ավելի նպատակահարմար է դրանք որքան հնարավոր է արագ հեռացնել, քան ձեւականորեն սպասել եւ ծանուցում ստանալուց հետո միայն հեռացնել,
4. եթե լրատվամիջոցը մեկնաբանություններում չի նկատել ակնհայտ ատելության խոսք, բռնության կոչ կամ ակնհայտ վիրավորանք պարունակող գրությունները, սակայն անձը, որի հասցեին եղել են դրանք, այդ մասին ծանուցել է խմբագրությանը, ապա խորհուրդ ենք տալիս ծանուցումից հետո ողջամիտ ժամկետում հեռացնել նման մեկնաբանությունները:

V. ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի եւ Տեղեկատվական վեճերի խորհրդի՝ «Խտրական վերաբերմունքի եւ ատելության խոսքի տարածման անթույլատրելիության մասին» հայտարարություն՝ ընդունված 09.10.2023թ.:

«Լրատվամիջոցների էթիկայի Դիտորդ մարմինը եւ Տեղեկատվական վեճերի խորհուրդը… հայտարարում են, որ անհանդուրժողականություն, խտրականություն ու թշնամանք տարածող արտահայտությունները (հավաքական կերպով՝ ատելության խոսքը) չեն կարող օգտվել ազատ խոսքի որեւէ պաշտպանությունից՝ ՀՀ իրավական համակարգում կամ միջազգային իրավունքում:

VI. ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի աշխատակարգ.

4.9. Դիտորդ մարմինն Ինքնակարգավորման նախաձեռնության ոչ անդամների հրապարակումների վերաբերյալ բողոքների քննությունից հետո ընդունում եւ հրապարակում է փորձագիտական կարծիք կամ հայտարարություն:
4.13. Նախաձեռնության անդամ չհանդիսացող ԶԼՄ-ների

հրապարակումների վերաբերյալ բողոքները կարող են քննվել տվյալ լրատվամիջոցի համաձայնության դեպքում: Այսուհանդերձ, տվյալ ԶԼՄ համաձայնության բացակայության դեպքում ԴՄ-ն իրեն իրավունք է վերապահում հրապարակման վերաբերյալ ներկայացնել փորձագիտական կարծիք՝ տարածելով այն իրեն հասանելի միջոցներով:

Գ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝

- քննելով «ՓԻՆՔ» իրավապաշտպան ՀԿ դիմումը խնդրի վերաբերյալ,
- քննելով ՀՀ օրենսդրությունը, միջազգային իրավունքի, այդ թվում՝ նախադեպային իրավունքի նորմերը, ԶԼՄ-ների գործունեության էթիկական նորմերը եւ դրանց վերաբերելիությունը քննվող գործին,

Արձանագրում է՝

1. Aysor.am-ի՝ քննարկման առարկա բուն հրապարակումներում խտրականության եւ ատելության խոսքի տարածմանն առնչվող խախտումներ չկան:
2. Aysor.am-ի՝ քննարկման առարկա նյութերի ֆեյսբուքյան հրապարակումների մեկնաբանություններում ԼԳԲՏՔ+ անձանց ուղղված ատելության խոսքի, խտրականության, վիրավորանքի բազմաթիվ դրսեւորումներ կան, որոնք լրատվամիջոցի կողմից մոդերացիայի չեն ենթարկվել:
3. «ՓԻՆՔ» կազմակերպությունը ատելության խոսք եւ խտրականություն սփռող մեկնաբանությունների մոդերացիայի հարցով մինչ Դիտորդ մարմնին գրելը չի դիմել Aysor.am-ի խմբագրությանը:
4. Այդուհանդերձ, արդեն սույն բողոքն ստանալուց հետո ԴՄ համակարգողը դիմել է խմբագրությանն ու ներկայացրել խնդիրը, ինչից հետո, սակայն, մեկնաբանություններում ատելության խոսք, խտրականություն եւ վիրավորանք պարունակող մեկնաբանությունները չեն հեռացվել (փորձագիտական եզրակացության հրապարակման պահին դրանք դեռ առկա են):
5. Թեեւ Aysor.am-ը ԶԼՄ-ների ինքնակարգավորման նախաձեռնության անդամ չէ, սակայն Հայաստանի Հանրապետությունում լրատվական գործունեություն իրականացնող ցանկացած սուբյեկտ պարտավոր է հետեւել Սահմանադրությամբ եւ օրենսդրական այլ ակտերով (այդ թվում՝ ՀՀ օրենսդրության մաս կազմող միջազգային իրավական նորմերով) նախատեսված՝ ատելության խոսքի եւ խտրականության բացառման, մասնավորապես, ՄԻԵԴ-ի՝

«Դելֆին ընդդեմ Էստոնիայի» նախադեպային վճռով սահմանված պահանջներին։

Հետեւաբար, Դիտորդ մարմինը հորդորում է

Aysor.am-ի խմբագրությանը՝

- մոդերացիայի ենթարկել սույն գործով քննարկման առարկա սոցցանցային հրապարակումները եւ հեռացնել ատելության խոսք եւ խտրականություն պարունակող մեկնաբանությունները եւ նույն կերպ վարվել նաեւ հետագա հրապարակումների պարագայում,
- ԴՄ այս փորձագիտական կարծիքը հրապարակել իրեն հասանելի միջոցներով։

«ՓԻՆՔ» ՀԿ-ին՝

- լրատվամիջոցների հետ ծագող խնդիրների դեպքում Դիտորդ մարմնին դիմելուց առաջ փորձել հարցը լուծել լրատվամիջոցի հետ անմիջական քննարկումների միջոցով։

Ընդունվել է 2024 թ. հունվարի 19-ին,
ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետեւյալ կազմով

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
«Նյումեգ» հրատարակչության գլխավոր խմբագիր
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Երեւանի մամուլի ակումբի պատվավոր նախագահ
Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
«Մեդիամաքս» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Ռեժիսոր, Երեւանի թատրոնի եւ կինոյի ինստիտուտի պրոֆեսոր
Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ
Երեւանի մամուլի ակումբի մասնագիտական էթիկայի հանձնաժողովի նախագահ
Լեւոն ԲԱՐՍԵՂՅԱՆ
Գյումրու ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
«ԳԱԼԱ» ՀԸ գործադիր տնօրեն
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Արմավիրի «ԱԼՏ» հեռուստաընկերության խմբագիր
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորել են ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցները, որոնք այս պահին 76-ն են։ ԴՄ-ն ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2023 թվականի հունիսի 25-ի ընդհանուր ժողովում։